

#MuslimBan Ռեսուրսների Ուղեցույց Ամփոփում

Ուրբաթ օրը, 2017 թ. հունվարի 27-ին, նախագահ թրամփը ստորագրել է Գործադիր Հրաման որը սահմանափակում է ԱՄՆ ճանապարհորդությունը եւ ներգաղթը: Հրամանն անմիջական ազդեցություն ունի Իրանից, Իրաքից, Լիբիայից, Սոմալիայից, Սուդանից, Սիրիայից, եւ Եմենից անձանց վրա: Չնայած այն անվանվել է «Մահմեդական Արգելք», Թրամփի Գործադիր Հրամանը ազդեցություն ունի յոթ երկրների բոլոր համայնքների վրա, անկախ անձանց կրոնական կամ ազգային ծագմանը: Այնուամենայնիվ, արգելքը ավելացնում է աննախադեպ "կրոնական թեստ" բոլոր անձանց համար ովքեր փնտրում են ապաստան, որն վերջիվերջո արգելում է հալածանքից փախչող Մահմեդականների մուտքը ԱՄՆ: ԱՄՆ - ի մաքսային եւ սահմանապահ ծառայությունը ձերբակալել, արտաքսել, եւ սահմանափակել է անձանց մուտքը Միացյալ Նահանգների, այդ թվում, այն անձանց, ովքեր արդեն ճանապարհորդում եին կամ վայրելք եին կատարել ԱՄՆ-ում:

Հրամանն ազդեցություն ունի տարբեր ներգաղթային կարգավիճակներում գտնվող մարդկանց վրա, ներառյալ՝ փախստականների, մշտական բնակության իրավունք (գրին քարտ) ունեցողների, եւ ոչ Ամերիկայի երկքաղաքացիների: Բազմաթիվ անձիք, ովքեր ծնվել են, յոթ արգելված երկրներից դուրս, սակայն Հարավ-Արևմտյան Ասիայում, Արեւմտյան Ասիայում, Հարավային Ասիայում, Հյուսիսային Աֆրիկայում եւ Արեւելյան Աֆրիկայում նույնպես ձերբակալվել է եւ, ի վերջո, ազատ է արձակվել:

Հրամանին հաջորդող օրերին, հարյուրավոր փաստաբանների, թարգմանիչների, եւ այլ կամավորների փորձում են ձեռք բերել հստակություն, արգելքից տուժած անձանց պաշտպանելու և օգնելու համար: [Այս ուղեցույցի նպատակն է ծառայել որպես լրացուցիչ ռեսուրս, և այն ոչ մի դեպքում չի կարող փոխարինել օրենսդրական կամ կազմակերպական աջակցությանը:](#) Խնդրում ենք օգտագործել այս ուղեցույցը պատշաճ իրավական ներկայացուցչության հետ համատեղ.

Այս ուղեցույցը տարբեր անհատների եւ կազմակերպությունների համագործակցության արդյունք է: Նպատակն է ապահովել առավել հուսալի եւ արդիական տեղեկատվություն նախագահ Թրամփի Գործադիր Հրամանի մասին: Տեղեկատվությունը ամբողջովին հասանելի է արաբերեն, պարսկերեն, սոմալերեն, ուրդու, եւ հայերեն, շնորհիվ կամավորների ջանքերի:

Այս ուղեցույցի նպատակն է:

1. Տեղեկացնել այն մարդկանց, որոնց ազդել է արգելքը, իրենց իրավունքների և իրենց մատչելի ռեսուրսների մասին,
2. Տրամադրել անհրաժեշտ պրակտիկ խորհրդով նման իրավիճակի մեջ ընկնելու դեպքում

3. Իրազեկել թե ինչ միջոցներով կարելի է բողոքարկել արգելքը, ընդհուպ մինչև Կոնգրեսի անդամներին դիմելով
4. Օգտակար տեղեկատուներ տրամադրել տարբեր իրավական, իրավունքների պաշտպանության և ծառայողական կազմակերպությունների միջոցով:

Անձինք, որոնք հավելյալ օգնության կարիք ունեն, կարող են կապվել bannedlives@iranianalliances.org կամ info@ajammc.com: Այս ուղեցույցը կազմվել է հետևյալ անձանց և կազմակերպությունների կողմից [Ajam Media Collective](#), [Iranian Alliances Across Borders \(IAAB\)](#), [Iraqi Transnational Collective \(ITC\)](#), [Palestinian Youth Movement \(PYM\)](#), [Southwest Asian & North Afrikan - Los Angeles \(SWANA-LA\)](#), [SWANA Rising for Collective Liberation \(SRCL\)](#), նաև կամավորների կողմից:

Բովանդակություն

1. Հիմնական Կետեր

2. Ինֆորմացիա Կալանավորների Համար

- Կալանավորներ ԱՄՆ իրավական մուտքի արտոնագրերով
- Կալանավորներ Գրին Քարդ կամ Մշտական Բնակավայրի Արտոնագրերով
- Կալանավորներ ԱՄՆ երկքաղաքիության իրավունքով
- Անձինք տրանզիտային ուղեվորության ընթացքում
- Եթե Ներգաղթային և Սահմանային Ուժային մարմինների (ICE) ներկայացուցիչները թակում են Ձեր դուռը

3. Ոնեսուրաներ

- Անվճար իրավական խորհուրդ
- Ներգաղթային խորհուրդ
- Ատելության և խտրականության գծով հանցագործությունների հայտարարում

4. Հավելյալ Ծառայություններ

- Տեղական իրավունքների պաշտպանություն
- Հոգեկան առողջության գծով օգնություն տեղական և ազգային
- Տեղական Օգնության միջոցներ փախստականների համար

5. Հավելյալ Տեղեկատվություն

- Սոցիալական Ցանցեր Հետեւելու
- Խոսելու Կետեր Ներգաղթի Վերաբերման (Վիճակագրության եւ Քաղաքականության)

[1] Հիմնական կետեր

- Արգելքը վերաբերվում է Իրանի, Իրաքի, Լիբիայի, Սոմալիի, Սուդանի, Սիրիայի և Յեմենի քաղաքացիներին:

- Եթե դուք ԱՄՆ քաղաքացի եք, Ձեզ չեն կարող զրկել Ամն մուտքի իրավունքից: Սակայն Դուք կարող եք ենթարկվել հավելյալ հարցաքննության, քանզի դեպքեր են գրանցվել երբ Ամն քաղաքացիները հարցաքննվել են սոցիալական ցանցերում տեղադրած տեղեկատվության մասին:

- Եթե դուք ԱՄՆ քաղաքացի չեք, ապա դիմեք ներգաղթային իրավաբանի օգնությանը, ԱՄՆ-ից դուրս ճանապարհորդության դեպքում:

Ստորև տրամադրված խորհուրդը վերաբերվում է ներգաղթային հատուկ արտոնություններ ունեցող անձանց:

- Green Card (գրին քարտ) / օրինական մշտական բնակիչ (LPR): Եթե դուք ունեք գրին քարտ, կամ համարվում եք օրինական մշտական բնակիչ, ապա խորհուրդ է տրվում, որ դուք խորհրդակցեք ն ներգաղթի իրավաբանի հետ նախքան միջազգային ճանապարհորդության պլաններ ձեռնարկելը: Եթե դուք գտնվում եք ԱՄՆ-ից դուրս, ձեզ նույն պես խորհուրդ է տրվում, խորհրդակցել ներգաղթի իրավաբանի հետ քանի որ դուք կարող է ենթարկա լինել արգելքին: Եթե վերադարձի ժամանակ ձեզ կալանավորեն չստորագրեք I-407 փաստաթուղթ, նույնիսկ ճնշման տակ, եթե դուք չեք ցանկանում հրաժարվել ձեր գրին քարտից.
- Երկքաղաքացիություն: Եթե դուք ունեք Երկքաղաքացիություն ստատուս նշված երկրներից որեւէ մեկի հետ եւ ԱՄՆ-ի քաղաքացի չեք (Ֆրանսիա-Սիրիայա, Անգլիա-Սոմալի) շատ հնարավոր է որ ձեզ արգելեն մուտք գործել ԱՄՆ, անկախ որ անձնագրին կօգտագործեք: (Կան հակասական զեկույցներ այս հարցի վերաբերյալ, հետեւաբար, խորհուրդ չի տրվում ճանապարհորդել Միացյալ Նահանգներից դուրս, առանց ներգաղթի

- իրավաբանի հետ խորհրդակցելը:)
- Առանց փաստաթղթերի (անօրինական): Եթե դուք չունեք անհրաժեշտ փաստաթղթեր եւ բնակվում եք ԱՄՆ-ում, խորհրդակցեք ներգաղթի իրավաբանի հետ տեղեկացվելու ներգաղթի վերաբերյալ տարբերակների եւ պոտենցիալ ռիսկների մասին: Արտաքսման դեպքում ապահով լինելու համար, համոզվեք որ ձեր փաստաթղթերը հասանելի են: Կազմեք ցուցակ վստահելի անձանց, ընկերների, գործընկերների, եվ սիրելիներին հերախոսա համարներով: Համոզվեք որ որեւէ մեկը տեղում կլինի հոգալու երեխաների եւ տարեց ընտանիքի անդամների մասին: Մի բացեք դուռը ֆեդերալ կամ տեղական իրավապահ մարմինների դեմ: Անպայման պահանջեք տեսնել ծանուցագիր: Իրավունք ունտեք պահանջելու որպիսի ծանուցագիրը սահեցնեն դռան տակ: Եթե դուք ունեք իրավաբան, տեղեկացրեք ֆեդերալ կամ տեղական իրավապահ մարմիններին դիմել ձեր իրավաբանին:
 - Ուսանողական, գիտնական, կամ աշխատանքային: Եթե դուք ուսանող եք, գիտնական, կամ աշխատող, եւ ձեր վիզան հովանավորվում է ձեր հիմնարկի, կազմակերպության, կամ ընկերության կողմից, եւ դուք պարտավոր եք մեկնել եւ նորից մուտք գործել ԱՄՆ, Գործադիր Հրամանը կոչ է անում 90-օրյա արգելք ներգաղթային եւ ոչ-ներգաղթային մուտքը ԱՄՆ: Ուսանողները, մասնավորապես, կարող են կապվել համալսարանի Designated School Official (DSO) եւ ներգաղթի իրավաբանի հետ պարզելու թե իրավասու են Optional Practical Training (OPT) կամ National Interest Waiver (NIW) ստանալու:
 - Visa: Եթե դուք նշված 7 երկրներից մեկի քաղաքացի եք սակայն ունտեք հիմնավոր, օրինական, հաստատված վիզա, բայց գտնվում եք ԱՄՆ - ից դուրս, հնարավոր է դուք բախվեք դժվարությունների վերադարձի ժամանակ. Հետեւյալ վիզաները չեն հավաստիացնում վերադարձը ԱՄՆ (այս ցուցակը սպառիչ չէ):
 - o Green Card (LPR): Օրինական մշտական բնակիչ
 - o B1/B2: Տուրիստական/այցելուի վիզա
 - o H visa: Ժամանակավոր աշխատող
 - o K-1 visa: Փեսացու/Հարսնացու
 - o J visa: Այցելուներ/Գործադրողներ
 - o Q visa: կրթական եւ մշակութային, փոխանակման ծրագիր, մշակութային /զբոսաշրջիկ
 - o V visa: ամուսին եւ երեխաներ օրինական մշտական բնակիչ

[2] Տեղեկատվություն Կալանավորների համար

Եթե Ձեզ ծանոթ անձանցից որևիցե մեկը կալանավորվել է օդանավակայանում, ապա անմիջապես զանգահարեք Ամերիկյան Քաղաքացիական Ազատության Միության թեժ գիծ: Դուք կարող եք գտնել հավելյալ տեղեկատվություն հետևյալ կայքում [here](#): Դուք կարող եք նաև զանգեհարել Հակա-արաբական խտրականության Կոմիտե-ի իրավաբանական բաժնին հետևյալ հեռախոսահամարով 202-244-2990: Ինչպես

նաև կարող եք դիմել Հայ Դատի Հանձնախմբին, էլեկտրոնաին նամակ ուղարկելով travel@anca.org կամ զանգահարելով (202) 775-1918:

- Եթե դուք Սան Ֆրանսիսկոյի օդանավակայանում եք, դիմեք օգնության հետևյալ կայքի միջոցով` Twitter (@onejusticeorg)
- Եթե դուք Լոս Անջելեսի օդանավակայանում եք, դիմեք օգնության զանգահարելով Ամերիկյան Քաղաքացիական Ազատության Միության թեժ գիծ 212-977-5245
- Եթե դուք JFK օդանավակայանում եք, դիմեք օդանավակայանի իրավաբանին հետևյալ կերպով, կամ զանգահարեք թեժ գիծ 844-326-4940: Դուք կարող եք նաև դիմել քաղաքապետ Cuomo-ին հետըյալ թեժ գծով` 888-769-7243

Կալանավորներ վավերական ԱՄՆ մուտքի արտոնագրով

1. Մի լքեք ԱՄՆ, առանց իրավաբանի հետ խորհրդակցելու,

Կալանավորներ վավերացված գրին քարդ փաստաթղթով կամ մշտական բնակավայրի արտոնությամբ

1. Մի լքեք ԱՄՆ, առանց իրավաբանի հետ խորհրդակցելու,
2. ԱՄՆ մուտքի դեպքում մի ստորագրեք I-407 փաստաթուղթը, եթե նույնիսկ Ձեզ հայտնեն որ նշված փաստաթղթի ստորագրումը կպարզեցնի ընթացակարգը: Ստորագրելը չեղյալ կհամարի Ձեր մշտական բնակավայրի արտոնությունը:

Կալանավորներ ԱՄՆ երկքաղացիության իրավունքով

1. Մի լքեք ԱՄՆ, առանց իրավաբանի հետ խորհրդակցելու:

Անձինք տրանզիտային ուղեվորության ընթացքում

- Եթե ձեզ անհրաժեշտ է գիշերելու վայր փորձեք **Airbnb**, որը կարծես թե առաջարկում է անվճար բնակարվայր արգելքից տուժված անաձանց:
- Եթե ձեզ անհրաժեշտ է զանգահարել, **Viber** ծրագիրը այժմ թույլ է տալիս զանգեր ցանկացած ամերիկյան եւ 7 ազդված երկրների հեռախոսահամարներին:
- Եթե դուք մնացել եք Կանադայում, ներգաղթի նախարարը հայտարարել է, որ Կանադան կառաջարկի ժամանակավոր բնակության մահմեդական արգելքից տուժած անձանց:
 - Եթե դուք փնտրում են ինչ ժամանակավոր բնակավայր Տորոնտոյում, կան խմբեր որոնք կարող են օգնել **Facebook**, **Google Doc**
- Եթե դուք այժմ գտնվում են տարանգիտում, եւ կարող եք կապնվել ձեր ընտանիքի անդամների հետ, դիմեք նրանց անմիջապես, որպիսի նրանք կարողանան դիմել իրավաբանի նախքան ձեր ժամանումը.

- Փաստաբանները օդանավակայաններում, անհատապես են աշխատում բոլոր ձերբակալման դեպքերի հետ, եւ պետք է ներկայացնեն ստորագրված G-28 փաստաթուղթը որպես ապացույց փաստաբան-հաճախորդ հարաբերության: Որտեղ հնարավոր է, կազմակերպեք G-28 փաստաթուղթը, առկա կամավոր փաստաբանի հետ:
- Եթե դուք ունեք փաստաբան, դիմեք նրան նախքան վայրէջքը ԱՄՆ – ում
- Եթե կարծում եք, որ ձեր ծագման երկրում ձեզ սպառնում է ռիսկ __ պատրաստ եղեք պահանջել "վստահելի վախ հարցազրույց" ԱՄՆ-ի օդանավակայանում: Այս հարցի դեպքում դուք իրավունք ունեք պահանջելու փաստաբան:

Եթե Ներգաղթային և Սահմանային Ուժային մարմինների (ICE) ներկայացուցիչները թակում են Ձեր դուռը:

- Մի բացեք դուռը
- Հարցրեք նրանց այցի պատճառը, խնդրեք թարգմանիչ եթե հարկավոր է
- Եթե նրանք ցանկանում են ներս մտնել հարցրեք ունեն արդյոք օրդեր ստորագրված դատավորի կողմից, կարող եք խնդրել օրդերը դռան տակից փոխանցել
- Եթե նրանք ուժային միջոցներով փորձում են ներս մտնել, մնացեք հանգիստ և լուռ
- Եթե ձեզ ձերբակալել են, մանցեք լուռ և մի ստորագրեք ոչ մի փաստաթուղթ մինչև չխոսաք փաստաբանի հետ
- ICE Վարչական օրդեր (form I-200, I-205) թույլ չի տալիս նրանց ներխուժել Ձեր բնակավայր

[3] Ռեսուրսներ:

- Անվճար իրավական խորհուրդ

- American Immigration Lawyers Association (Ամեիկյան Ներգաղթային Իրավաբաններիա Ասոցիացիա): Lawyer search <http://www.aialawyer.org/>
- Immigration Legal Directory (Ներգաղթային Իրավական Տեղեկատու) մատչելի տարբեր լեզուներով: <https://www.immigrationadvocates.org/nonprofit/legaldirectory/>
- Immigration Advocates Network(Ներգաղթի Իրավապաշտանության Համացանց): <https://www.immigrationlawhelp.org>
- National Immigration Project of the National Lawyers Guild's online find-a-lawyer tool (Ազգային Փաստաբանների Գիղի Ազգային Ներգաղթի Ծրագիր - "գտիր փաստաբան" գործիք): <https://www.nationalimmigrationproject.org/find.html>
- National Immigrant Justice Center (Ազգային Ներգաղթի Արդարադատության Կենտրոն): Զանգահարեք կամ գրեք իրավական խորհրդակցության համար (312-660-1370),

immigrantlegaldefense@heartlandalliance.org

- Ներգաղթի դատարանի իրավաբանների և կազմակերպությունների ցանկ, որոնք տրամադրում են անվճար խորհրդակցություն:
<http://www.justice.gov/eoir/list-pro-bono-legalservice-providers-map>
- Ներգաղթի իրավական Ռեսուրս Կենտրոն, որն ունի համապարփակ առցանց ընդունելության դիմում:
<https://www.ilrc.org/screening-immigrationrelief-client-intake-form-and-notes>
- Ավարտական ուսանողների համար Կալիֆորնիայի Համալսարանների ցանցը տրամադրում է իրավական օգնություն UAW 2865, խնդրում ենք ընտրել Ձեր մասնաճյուղը հետևյալ կայքի միջոցով [here](#).
- Մեկ Արդարություն (չունևոր Կալիֆորնիացիների համար): <https://onejustice.org/>
- Հայ Դատի Հանձնախումբ- էլեկտրոնային նամակ ուղարկեք travel@anca.org կամ զանգահարեք (202) 775-1918.

- Ներգաղթային խորհուրդ

- CUNY CLEAR կտրամադրի իրավաբանական օգնություն Նյու Յորքում գտնվող անձանց համար: Օգնությունը կտրամադրվի արաբերեն, բանգլի, անգլերեն, ֆրանսերեն, իսպաներեն, ուրդու և այլ լեզուներով, դիմեք Ձեր տեղական մզկիթը և զանգահարեք հետևյալ համարով 718-340-4558.
- The American-Arab Anti-Discrimination Committee (ADC) Ամերիկյան Արաբական Հակա-խտրականական Կոմիտե կտրամադրի անվճար իրավական խորհրդակցություն ամերիկա-արաբների համար ներգաղթի, ազգային պրոֆիլավորման և խտրականության հարցերով: Դուք կարող եք դիմել հետևյալ հեռախոսահամարով (202) 244-2990 or legal@adc.org

- Ատելության և խտրականության գծով հանցագործությունների հայտարարում

- The Council on American-Islamic Relations (CAIR) Ամերիկա-իսլամական Հարաբերությունների Խորհուրդ ունի քաղաքացիական իրավունքների անձնակազմ, որն օրական կտրվածքով ստանում է խտրականության դիմումներ և փորձում լուծումներ տրամադրել խորհրդի, բանակցությունների, հանրային ճնշման և հարկ եղած դեպքում իրավական միջոցներով: Դուք կարող եք զանգահարել կամ կապվել հետևյալ ձևով` 312-212-1520 or civilrights@cairchicago.org.
- The Arab American Institute (AAI) Արաբ Ամերիկյան Ինստիտուտը իրազեկում է ատելության և խտրականության հանցանքի բնորոշումների և արձանագրելու միջոցների մասին, ներառյալ թե որ կազմակերպություններին է պետք դիմել խտրականության համար:
- The Southern Poverty Law Center, Հարավային Աղքատության Օրենքի Կենտրոնը թույլ է տալիս արձանագրել ատելության միջադեպերը իրենց կայքում, որպեսզի հնարավոր լինի նման միջադեպերի համազգային մոնիտորինգը: Նրանք խրախուսում են առաջինը դիմել ոստիկանություն նման դեպքերում:

Ես Իրանի, Իրաքի, Լիբիայի, Սիրիայի, Սոմալիի, Սուդանի, կամ Յեմենի քաղաքացի եմ և ես չունեմ ԱՄՆ անձնագիր:

Ես ունեմ	Ես գտնվում եմ ԱՄՆ-ում	Ես գտնվում եմ ԱՄՆ-ից դուրս
<p>ԱՄՆ մուտքի արտոնագիր (օրինակ B1 բիզնես վիզա, B2 տուրիստի վիզա, K1 հարսնացու կամ փեսացու վիզա, E1 աշխատանքային վիզա)</p>	<p>Մի լքեք ԱՄՆ եթե Ձեր արտոնության ժամկետը չի սպառվել</p> <p>Եթե Ձեր արտոնության սպառման ժամկետը մոտ է և դուք չեք կարող բավարարել նրա նախապայմանները, խորհրդակցեք իրավաբանի հետ</p>	<p>Ձեզ չեն թույլատրի մուտք գործել ԱՄՆ հրամանի ընդունման օրվանից 90 օրվա կտրվածքում , հավանաբար է այս ժամկետը կերկարաձգվի: Մուտքի մերժումից հետո հավանական է, որ Ձեզ կհետաքննեն ԱՄՆ սահմանագծի վրա:</p>
<p>Գրին Զարդ կամ ԱՄՆ մշտական բնակավայրի արտոնություն</p>	<p>Մի լքեք ԱՄՆ</p> <p>Եթե Դուք պարտավոր եք լքել ԱՄՆ ապա Դուք կարող եք գրկվել վերադարձի իրավունքից կամ հարցաքննվել</p>	<p>Ձեզ չեն թույլատրի մուտք գործել ԱՄՆ հրամանի ընդունման օրվանից 90 օրվա կտրվածքում , հավանաբար է այս ժամկետը կերկարաձգվի: Մուտքի մերժումից հետո հավանական է, որ Ձեզ կհետաքննեն ԱՄՆ սահմանագծի վրա: Խորհրդակցեք ներգաղթային իրավաբանի հետ: Խուսափեք ստորագրել (Form I-407) փաստաթուղթը, որով հրաժարվում եք ԱՄՆ մշտական բնակության իրավունքից:</p>
<p>Վերոհիշյալ երկրներից մեկի անձնագիր ունեմ, բայց գործածում եմ մեկ այլ երկրի անձնագիր - ոչ ԱՄՆ</p>	<p>Մի լքեք ԱՄՆ արտոնությամբ տրամադրված ժամկետներում, ճանապարհորդությունից առաջ խորհրդակցեք իրավաբանի հետ</p>	<p>Ձեզ չեն թույլատրի մուտք գործել ԱՄՆ հրամանի ընդունման օրվանից 90 օրվա կտրվածքում , հավանաբար է այս ժամկետը կերկարաձգվի:</p>

[4] Հավելյալ Ծառայություններ

Տեղական իրավունքների պաշտպանություն

- Թարգմանիչներ օդանավակայաններում: Պարսկերենի և արաբերենի թարգմանիչներ են հարկավոր, հատկապես իրավաբանների: Մուտքագրվեք հետևյալ կայքում իրավաբաններին օդանավակայանում օժանդակելու համար:
- <https://docs.google.com/forms/d/e/1FAIpQLSecouJBDUSvoNbXDbWowSA74xuGdVE0uVluFmEelMe0v0TmVw/viewform?c=0&w=1>
- Ուսումնական Հաստատությունները ընդդեմ Ներգաղթի Գործադիր Հրամանի: Եթե Դուք աշխատում եք ուսումնական հաստատությունում, Դուք կարող եք ավելացնել Ձեր անունը հրամանագրի բողոքագրման խնդրագրանկին <https://notoimmigrationban.com/>
- Ջանգահարեք Ձեր Սենատորներին, որպեսզի նրանք պայքարեն արգելքի դեմ: Պարզեք Ձեր սենատորների կարծիքը արգելքի դեմ և թե ինչպես կապնվեք իրենց հետ [here](#). 1-866-940-2439 - Representative - Find your Representative [here!](#) 1-866-961-4293 - Senators - Find your Senators [here!](#)
- Դիմեք կարճ և հակիրճ լեզվով, օրինակ՝
 - “I urge President Trump and Congress to direct Customs & Border Protection to end detention and return of refugees, and persons based solely on their religion and national origin to rescind this Executive Order. America has long been a place of refuge for the world’s most vulnerable! Families should not be separated because of bigotry!”
- Եթե նույնիսկ Ձեր ներկայացուցիչը արգելքին դեմ չէ, շատ օգտակար է զանգահարել և նրանց հայտնել Ձեր կարծիքը: Ներկայացուցիչները ավելի ակտիվ դիրքորոշում կունենան այն խնդիրների շուրջ, որոնք լայն արձահանք ունեն իրենց ընտրողների շարքերում:
- Նվիրատվիրություն կատարեք հետևյալ կայքերում the [ACLU](#), the [National Immigration Project of the National Lawyer’s Guild](#) and [CAIR](#).
- Գրեք նամակներ Կոնգրեսին, Սենատորներին և Սպիտակ տանը, օրինակները հետևյալ կայքում [this document](#).
- **Tweet at President Trump!**
- **Popular Hashtags:** #NoBanNoWall, #NoMuslimBan #MuslimBan #RefugeesWelcome

Հոգեբանական առողջության գծով օգնություն տեղական և ազգային

- [Institute for Muslim Mental Health](#)
 - Գտեք թերապևտ: <http://www.muslimmentalhealth.com/mmh/directory>
- [Mental Health4Muslims](#)
 - Գտեք թերապևտ:
<http://mentalhealth4muslims.com/mental-health-directory/#&panel1-1>
- [Stones to Bridges](#) - Անանուն խորհրդատվություն Մահմեդական Երիտասարդության Համար
- [NASEESHA](#) - Մահմեդական Երիտասարդական Թեժ Գիծ
- [National Alliance of Mental Illness](#) - Ապահովում ե ուղեգիր
- [Therapists of Color Referral Share](#)

- [Muslim Alliance for Sexual and Gender Identity](#) - Ուղեգրում Աղբյուր LPQS Մուսուլմանների Համար
- [Project Sakinah](#) - Ուղեցույց Մահմեդական Թերապեւտերի Համար
- California
 - [RAHAA](#), Հյուսիսային Կալիֆորնիայում, Պարսկա-Ամերիկյան Պարեգորցական Հոգեկան Առողջության Կազմակերպություն
 - [Khalil Center](#), Հյուսիսային Կալիֆորնիայում, Խորհրդատվություն եւ Թերապիա Ծառայություններ
 - [UCSF Trauma Recovery Center](#), Հյուսիսային Կալիֆորնիայում, Խորհրդատվություն եւ Թերապիա Ծառայություններ
 - [Partnerships for Trauma Recovery](#), Berkeley, CA
 - [Muslim American Society- Social Services Foundation \(MAS-SSF\)](#), Sacramento, CA
 - [The Muslim Community Association of Santa Clara](#), CA
 - [El Camino Women's Medical Group](#), Mountain View, CA
 - [Omid Institute](#), Irvine, CA
- [Minnesotaի հոգեկան առողջության պրովայդրների գրացուցակը փախստական ընակչության համար](#)
- [Oregonի հոգեկան առողջության պրովայդրների գրացուցակը փախստական ընակչության համար](#)
- Pennsylvania:
 - [Philadelphia Refugee Health Collaborative](#)
 - Philadelphia Refugee Mental Health Collaborative Project (PRMHC) www.culturalcommunities.org
- Washington DC:
 - [Potomac Muslim Counseling Link](#)

Տեղական Օգնության միջոցներ փախստականների համար

- Փախստականների կենտրոնի կազմած ուղեցույցը: <https://therefugeecenter.org/how-will-president-trumps-executive-order-affect-refugees/>
- Philadelphia, PA:
 - Ազգային Ծառայության Կենտրոն: <https://nscphila.org/>
- Dallas, TX:
 - Տեխասի Փախստականների Ծառայություն: <http://www.rstx.org/dallas.html>

[5] Հավելյալ Տեղեկատվություն

Սոցիալական Ցանցեր Հետեւելու

Կազմակերպություն	TWITTER	FACEBOOK
CUNY CLEAR	@CUNY_CLEAR	CUNYClear
CAIR (National)	@CAIRNational	CAIRNational
Muslim Advocates	@MuslimAdvocates	MuslimAdvocates
American-Arab Anti-Discrimination Committee (ADC)	@aayoub	ADCNational
Arab American Institute	@AAIUSA	ArabAmerican Institute
ACLU National	@ACLU	ACLU.Nationwide
JFK Attorneys	@NoBanJFK	
Muslim Anti-Racism Collaborative (Muslim ARC)	@MuslimARC	MuslimARC
OneJustice	@OneJusticeOrg	OneJustice

Խոսելու Կետեր Ներգաղթի Վերաբերման (Վիճակագրության եւ Քաղաքականության)

[Այստեղ](#) կարող եք գտնել լրացուցիչ տեղեկություններ, որոնք կարող են օգտակար լինել դիմակայելու փաստարկները կողմնակիցների արգելքին:

Եվս մեկ էջանոց բացատրություն արգելքի մասին կարող եք գտնել [այստեղ](#):